ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Խաչատուրի Բարդակչյանի Ի.Գ.00.04 - ՝Միջազգային հարաբերություններ՞ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ՝Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)՞ վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Հ.Խ. Բարդակչյանի ՝Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)՞ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային դերակատարներից մեկի՝ Չինաստանի արտաքային քաղաքականության հիմնախնդիրներին՝ ներքաղաքական տրանսֆորմացիաների ու քաղաքական էլիտաների գաղափարախոսական փոխակերպումների համատեքստում: Ներկայացված աշխաանքը հատկապես կարևորվում է այն հանգամանքով, որ Չինաստանի արտաքին քաղաքականության ողջ տրամաբանությունն ու անատոմիան փորձ է արվում ուսումնասիրել հենց ներքաղաքական զարգացումների լույսի ներքո, ինչը թույլ է տալիս հեղինակին տալ հիմնավորված ու համակարգված եզրակացություններ, իսկ երբեմն՝ կանխատեսումներ:

Ատենախոսությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև էլիտոլոգիական ուսումնասիրությունների իրականացման տեսանկյունից: Ակնհայտ է, որ Չինաստանի պես առանցքային աշխարհաքաղաքական սուբյեկտի ներքաղաքական էլիտար համակարգի առանձնահատկությունների վերհանումը կարևոր է ու անհրաժեշտ Պեկինի հետ ճիշտ հարաբերակցվելու, միջպետական երկխոսությունը արդյունավետ կառուցելու նպատակով: Եվ այս տեսանկյունից ներկայացված աշխատանքում տեղ գտած տվյալները, դրանց ամփոփումն ու եզրակացությունները կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև Հայաստանի համար: Վերջինս հատկապես արդիական է՝ հաշվի առնելով Չինաստանի ակտիվացումը Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Հարավային Կովկասում ձևավորվող նոր տրանսպարտային ճարտարապետությունը չինական ՝Գոտի և ճանապարհ՞ մեգանախագծում ինտեգրելու ռազմավարությունը:

Չինաստանի հետ արդյունավետ հարաբերությունների կառուցումը կարելի է գնահատել որպես Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային մարտահրավերներից մեկը, ուստի Հայաստանում իրականացվող սինոլոգիական հետազոտությունները կիրառական նշանակություն են ձեռք բերում:

Ողջունելի է հեղինակի կողմից պատմական-համեմատական մեթոդի կիրառումը, ինչը թույլ է տվել նրան բացահայտել Չիանստանի քաղաքական էլիտաների փոխակերպումները՝ սկսած հին ժամանակներից մինչև մեր օրեր: Այս համատեքստում հատկապես կարևոր է Չինաստանի քաղաքական էլիտաների էվոլյուցիայի վերաբերյալ իրականացված վերլուծությունը, չինական քաղաքական առաջնորդների ինստիտուտի հինգ սերունդների առանձնահատկությունների վերհանումը՝ չինական պետականության կայացման ու զարգացման, դրանում գաղափարախոսական առանձին ուղղությունների ազդեցության գնահատման միջոցով: Ուսումնասիրելով Չինաստանի վերջին երեք քաղաքական առաջնորդների՝ Ցզյան Ցզեմինի, Խու Ցզինտաոի ու Սի Ցզինպինի ներքին քաղաքական ռազմավարությունները՝ ատենախոսը կարողացել է այդ պրիզմայի միջով ուսումնասիրել 2003-2020 թթ. չինական արտաքին քաղաքականությունը, հատկապես դրա հայեցակարգային, գաղափարախոսական առանձնահատկությունները:

Աշխատանքն առանձնանում է գրագետ ակադեմիական լեզվով ու հստակ՝ խնդիրների լուծմանը նպաստող կառուցվածքով:

Միաժամանակ, Հ.Խ. Բարդակչյանի "Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)" վերտառությամբ աշխատանքը զուրկ չէ որոշ թերություններից ու բացթողումներից: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

1. Ներկայացված ատենախոսությունն ավելի շատ համապատասխանում է "Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ", քան "Միջազգային հարաբերություններ" մասնագիտական շիֆրին: Թեև վերնագրում ընդգծված է արտաքին քաղաքականության բաղադրիչը, այնուամենայնիվ, ատենախոսության շարադրանքն առավելապես նվիրված է Չինաստանի ներքաղաքական զարգացումներին ու էլիտար համակարգին: Դրա մասին է վկայում է նաև ատենախոսության տեսական մասը: Այսպես, 1.1 ու 1.2 գլուխներում հեղինակը գրեթե չի անդրադառնում միջազգային հարաբերությունների կամ աշխարհաքաղաքական տեսություններին՝ ուշադրությունը կենտրոնացնելով առավելապես էլիտաների տեսությունների, ինչպես նաև ժամանակակից չինական հասարակության պատմա-գաղափարախոսական հիմքրի վրա: Հարկ է ընդգծել, որ տեսական մասը կոչված է հստակեցնելու իրականացվող հետազոտության

սահմանները, հիմնավորելու ընտրված օբյեկտի տեսական նշանակությունը: Այս առումով նկատելի է որոշակի անհամապատասխանություն ատենախոսության թեմայի և կառուցվածքի, մասնավորապես՝ տեսական հատվածի միջև:

2. Ատենախոսության վերնագրում ներկայացված են հետազոտության խրոնոլոգիական սահմանները՝ 2003-2020 թթ.: Ու թեև վերջին՝ 3-րդ գլխում հեղինակը անդրադառնում է նշված ժամանակահատվածում չինական քաղաքական էլիտաների փոխակերպումներին, այնուամենայնիվ, 2-րդ գլխի մեծ մասը նվիրված է Չինաստանի 20-րդ դարի քաղաքական պատմությանը: Դա թույլ է տվել հեղինակին առանձնացնել "առաջնորդների հինգ սերունդները" Մաո Ցզեդունից մինչև Սի Ցզինպին, ինչը անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծել ներչինական քաղաքական փոխակերպումների էվոլյուցիան ճիշտ գնահատելու համար: Միաժամանակ, նման պատմական մեծ շերտի առանձնացումը առանձին գլխում անհամապատասխանություն է ստեղծում ատենախոսության կառուցվածքի ու վերնագրի միջև:
3. Ատենախոսը գրեթե չի անդրադառնում Չինաստանում ընդունված ռազմավարական փաստաթղթերին: Չկա անդրադարձ Չինաստանի անվտանգային ռազմավարություններին, կառավարության ծրագրերին, Կոմունիստական կուսակցության ծրագրերին, արտաքին քաղաքականության դոկտրինին, առանձին օրենսդրական ակտերին և այլն: Հեղինակը սահմանափակվում է միայն 2011 թ. "Սպիտակ գրքով": Դա էապես խարխլում է իրականացված հետազոտության էմպիրիկ հիմքերը:
4. Հավուր պատշաճի ներկայացված չէ Թայվանի, Հոնկոնգի, Տիբեթի, ինչպես նաև Սինցզյան-Ույղուրյան ինքնավար շրջանի գործոնների ազդեցությունը Չինաստանի ներքին քաղաքական զարգացումների ու արտաքին քաղաքական ուղենիշների սահմանման վրա: Մինչդեռ նշված գործոնները շարունակում են հաճախ համակարգաստեղծ նշանակություն ունենալ չինական քաղաքական օրակարգի համար: Ուստի, դրանց խորքային ուսումնասիրումը նշված թեմայի շրջանակներում ոչ միայն կարևոր է, այլ նաև անհրաժեշտ:
5. Ատենախոսության մեջ մեծ ուշադրություն է դրաձվում Չինաստանի քաղաքական էլիտաների ձևավորման գործում կրթական համակարգի ազդեցությանը: Մասնավորապես, բավականին հանգամանորեն ներկայացված է կայսերական Չինաստանում ձևավորված քննական համակարգին, որը թույլ էր տալիս մերիտոկրատական էլիտա ձևավորել: Միաժամանակ, ցանկալի կլիներ, եթե ատենախոսը գնահատեր նաև ժամանակակից Չինաստանում կրթական համակարգի ազդեցությունը քաղաքական էլիտաների ձևավորման գործում:

Օրինակ, այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Չինաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կուսակցական դպրոցը, որը հանդես է գալիս որպես քաղաքական կադրերի դարբնոց:

Չնայած նշված թերություններին ու բացթողումներին՝ "Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)" թեկնածուական ատենախոսությունն իրենից ամբողջական և ավարտուն աշխատանք է ներկայացնում, իսկ ատենախոսը արժանի է Ի.Գ.00.04 - "Միջազգային հարաբերություններ" մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Քաղաքական գիտությունների դոկտոր,
Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի
UNESCO քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր
Վահե Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոս քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Դավթյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԲՊՀ գիտական քարտուղար՝

Հ. Փիլավջյան

ք. Երևան
« » _____ 2023 թ.